

**ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԲԵՐՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Վիճակագրական հիմնական ցուցանիշների սահմանումները, հաշվարկման մեթոդաբանությունը, չափորոշիչները և այլ համապատասխան տեղեկատվությունը զետեղվում են «**Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը**» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումների «Հավելված 3» հատվածում: Հատվածը մշտապես նորացվում է միջազգային չափանիշներին համապատասխան, ավելացվում են նոր ցուցանիշներ և տրվում դրանց նկարագրությունները և սահմանումները: Ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումները՝ առանձին հատվածների տեսքով, զետեղվում են նաև վիճակագրական ժողովածուներում, տեղեկագրերում, տարեգրքերում և այլն:

2. Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ: Տվյալների տարածման ընդհանուր համակարգին (հիմնվել է 1997 թվականի դեկտեմբերի 19-ին) Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է 2001 թվականի մարտի 29-ին:

2003 թվականի նոյեմբերի 7-ից Հայաստանի Հանրապետությունն անդամագրվեց Տվյալների տարածման հատուկ ստանդարտին՝ դրանով իսկ դառնալով վիճակագրության բնագավառում կիրառվող միջազգային ամենախիստ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը:

Համաձայն Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջների համակարգին անդամակցող բոլոր երկրների վիճակագրական տեղեկատվությունը նկարագրող մեթոդաբանական տվյալները (մեթատվյալները)՝ նախապես մշակված ձևաչափերի միջոցով, տեղադրվում են Արժույթի միջազգային հիմնադրամի կայքի՝ հատուկ այդ նպատակով բացված էջում: Նշված կայքը նպատակ ունի հանրությանն առավել լայն հնարավորություններ ընձեռել՝ ծանոթանալու ցանկացած երկրի վիճակագրական տեղեկատվության համակարգի բաղկացուցիչ մասը կազմող, պարբերաբար արդիականացվող հիմնական մակրոցուցանիշներին, ինչպես նաև դրանց մշակման մեթոդաբանական մոտեցումներին:

Տվյալների տարածման հատուկ ստանդարտը բովանդակում է այն մշտական պահպանման խիստ պահանջները, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է Արժույթի միջազգային հիմնադրամի ստանդարտների տարածման տեղեկագրում: Տեղեկագիրը ներառում է անգլերեն համապարփակ փաստաթղթեր Տվյալների տարածման հատուկ ստանդարտի տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքում այդ նպատակով վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները: Նույն կայքում են տեղադրվում նաև մեթատվյալների հայերեն և ռուսերեն տարբերակները:

3. Եվրոպական համայնքի վիճակագրական ծառայության կողմից հաստատված է Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (NACE Rev.2) վերանայված տարբերակը, որն ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարից: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից մշակվել է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչը (NACE Rev.2 հիման վրա, ՏԳՏԴ խմբ.2), որը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի մայիսի 11-ի թիվ 14-Ա որոշմամբ, հաստատվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի թիվ 372-Ն հրամանով և 2009 թվականի հուլիսի 1-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում (հրապարակվել է ՀՀ ԳՆԱՏ N22 (340)՝ 16.07.2009 թվականին): Զուգահեռ

իրականացվել են նաև Եվրոպական համայնքի ըստ գործունեության տեսակների արտադրանքի դասակարգման (CPA-2008) ներդրման շարունակական աշխատանքները:

4. Միավորված ազգերի կազմակերպության Վիճակագրության հանձնաժողովի կողմից մշակվել է «Անհատական սպառման դասակարգիչն ըստ նպատակների» (5-նիշ), որի հիման վրա նախատեսվում է ազգային դասակարգչի մշակման նախապատրաստական միջոցառումների իրականացում՝ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը դասակարգելու համար:

5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը» սահմանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ճյուղերը՝ համապատասխան կոդերով: Սույն դասակարգիչը նախատեսված է կողմորելու Հայաստանի Հանրապետության տնտեսության ինստիտուցիոնալ միավորներն իրենց գործառնական նշանակությամբ՝ ըստ տնտեսության հատվածների և ենթահատվածների:

6. ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից մշակված «Անկախ պետությունների համագործակցության հիմնական միջոցների մոդելային վիճակագրական դասակարգիչի» հիման վրա նախատեսվում է մշակել ազգային դասակարգիչը տնտեսական գործունեության բոլոր մակարդակներում՝ սկսած առանձին տնտեսավարող սուբյեկտներից մինչև սուբյեկտների խմբերի կողմից կամ երկրի ներքին տնտեսությունում՝ հիմնական միջոցների վիճակագրական հաշվառման նպատակով, ինչպես նաև վիճակագրական դիտարկումների անցկացման ժամանակ, միջազգային համադրումների և այլ աշխատանքների՝ հիմնական միջոցների ծավալների, կազմի և վիճակի գնահատման համար:

7. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը սկսած 2014թ.-ից Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրության բնագավառում աշխատանքներ է իրականացրել «Ազգային հաշիվների համակարգ 1993-ից» «Ազգային հաշիվների համակարգ 2008-ին» (ԱՀՀ 2008) անցում կատարելու ուղղությամբ, ինչը ենթադրում է նաև ԱՀՀ 2008-ի ներդրումը համապատասխան Եվրոպական հաշիվների համակարգ 2010-ի (ԵՀՀ 2010) ձևաչափով: Սկսած 2015 թ.-ից Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրությունը վարվում է համաձայն ԱՀՀ 2008 մեթոդաբանության, համաձայն որի վերանայվել են նաև 2012-2014թթ. ԱՀՀ ցուցանիշները: ԱՀՀ 2008-ը պատրաստվել և հրատարակվել է միջազգային 5 կազմակերպությունների (Եվրոստատ, ԱՄՀ, ՏՀԶԿ, ՄԱԿ-ի վիճակագրական բաժին և ՄԱԿ-ի քարտուղարության տարածաշրջանային հանձնաժողովներ, ՀԲ) հովանու ներքո և 2009թ. փետրվարին Նյու-Յորքում կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 40-րդ նստաշրջանում ընդունվել որպես համընդհանուր ստանդարտ:

8. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կայքում մշտապես գեներվում են վիճակագրական հրատարակումները (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որոնցում հիմնականում ընդգրկված են վիճակագրական ցուցանիշների սահմանումները և մեթոդաբանական պարզաբանումները:

9. Միջազգային վիճակագրական մեթոդաբանության զարգացման առաջընթացը հասանելի դարձնելու և դրան իրազեկ լինելու նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գրադարանում ստացվում և պահպանվում են միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրների վիճակագրական ծառայությունների հրատարակումները:

10. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գործունեությունը խարսխված է Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական վիճակագրության 10 հիմնարար սկզբունքների (ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.1994թ.) և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 15 սկզբունքների (Եվրամիության և համագործակցության անդամ երկրների վիճակագրական մարմինների անկախության, ամբողջականության և հաշվետու լինելու մասին հանձնաժողովի կոմունիկատը Եվրամիության Պառլամենտին և Խորհրդին, Բրյուսել, 25.05.2005թ.) վրա:

11. Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունված՝ 04.04.2000թ., ՀՕ-48) 11-րդ հոդվածի 4-րդ պարբերության՝ Պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը (Ծրագիր) մշակվում է վիճակագրական տեղեկատվություն սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Ծրագրում նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

12. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհուրդը (Խորհուրդ) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշման 38 կետի ժ/ ենթակետին համաձայն: Խորհուրդն իր խորհրդատվական գործունեությամբ կոչված է նպաստելու վիճակագրական ցուցանիշների համակարգի, դիտարկումների (հաշվառումներ, հետազոտություններ, հաշվեգրումներ և այլն) և վիճակագրական այլ աշխատանքների ծրագրերի զարգացման ապահովման և մեթոդաբանության կատարելագործման աշխատանքների իրականացմանը:

Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ և գործում է հասարակական հիմունքներով:

13. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական հրատարակությունների պաշտոնական լեզուն հայերենն է: Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով նախատեսված, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում հրատարակությունները մեծամասամբ իրականացվում են նաև ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով: Տարընթերցությունների առկայության դեպքում վերահսկիչ տարբերակը (օրինակը) հայերեն լեզվով տարբերակն է:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքում վիճակագրական հրատարակությունները, ինչպես նաև տվյալների բազաները զետեղում է MS word, և/կամ MS excel, Adobe Acrobat PDF տարբերակներով: